| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 1171-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 2021.07.12-2021.07.25 Պաշտոնական հրապարակման օրը 21.07.2021 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 12.07.2021 |
| *Ստորագրող մարմինը* | Վարչապետի պաշտոնակատար | *Ստորագրման ամսաթիվը* | 20.07.2021 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 22.07.2021 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 1171-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2.10-րդ ու 8.4-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման 4-րդ ու 5-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի պաշտոնակատար** **Ն. Փաշինյան**

Երևան

20.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ